ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/43

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի տնօրեն Ս. Հայրապետյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով ընթացակարգին «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը վերականգնել:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.06.2019թ. և 21.06.2019թ. կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 27.06.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.06.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.07.2019թ.:

2. «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Մետաղամանեղեն գործարան ԲԲԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2019 թվականի մայիսի 17-ին հրապարակված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՅԲ-7/35» ծածկագրով մրցույթին, որի հայտերը բացվել են սույն թվականի մայիսի 27-ին: Սակայն մեր էլեկտրոնային փոստին ոչ առաջին տեղը զբաղեցնելու, ոչ էլ որակավորման փաստաթղթերը ուղարկելու մասին չենք ծանուցվել և չենք մասնակցել որակավորման փաստաթղթերը ներկայացնելու ընթացակարգին: 14.06.19թ-ին գրություն ենք ստացել, որ մեր հայտը մերժվել է որակավորման փաստաթղթերը չուղարկելու պատճառով:

Նշեմ նաև որ նույն պատվիրատուի կողմից հրապարակված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/33» ծածկագրով անցկացվող մրցույթում մեր ընկերությունը ճանաչվել է հաղթող ու համապատասխան ծանուցումը ստանալուց ժամեր անց ուղարկել որակավորման փաստաթղթերը, նույնը եղել է «ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/28» ծածկագրով անցկացվող մրցույթի պարագայում: Հարց է առաջանում ինչ պատճառով չենք ստացել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով մրցույթի որակավորման փաստաթղթերը ուղարկելու մասին ծանուցումը:

Հաշվի առնելով այն որ մեր ձեռնարկությունը, որը միակն է մնացել ամբողջ Կովկասում սև ցինկապատ, ալյումինե և չժանգոտվող պողպատից ամանեղեն պատրաստող, ներկայումս ունի 109 բաժնետեր և 20 աշխատակից: Նշեմ որ մեր ընկերությունը պետական հարկերը պատշաճ կերպով վճարել և շարունակում է վճարել մինչ օրս: Ընկերության շարժիչն ու հենասյունը պետական կառույցների կողմից հրապարակվող մրցույթներն են և մնացել է կանգուն հենց դրանց շնորհիվ, որովհետև մեր ունեցած շուկան ինչպես գիտեք մեծ չէ և արտերկրից ներմուծված նմանատիպ ապրանքները բացասական են ազդում մեր առևտրաշրջանառության վրա:

Գնահատելով իրավիճակը և հաշվի առնելով այն, որ Մետաղամանեղեն գործարան

ԲԲԸ-ն վերոնշյալ ապրանքը առաջարկում է 1.320.000 դրամ ավելի ցածր գնով քան՝ երկրորդ տեղը գրաված մասնակցի գնային առաջարկն է և 3.000.000 դրամ ավելի ցածր՝ քան երրորդ տեղի մասնակցի առաջարկը և որ մենք պարզապես անտեղյակ ենք եղել որակավորման փաստաթղթերը ուղարկելու ծանուցումից, ուստի խնդրում ենք վերանայել հայտի մերժումը և կրկին ճանաչել մեզ հաղթող մասնակից: Մեր ընկերությունը հավաստիացնում է, որ պատրաստ է ժամանակին և պատշաճ որակով մատակարարելու և որ ունի համապատասխան բոլոր սարքավորումներն ու աշխատուժը, նշենք նաև որ մենք ենք արտադրել վերոնշյալ ապրանք՛ը, քանակով՝ 10.000 հատ: Միաժամանակ խնդրում եմ հաշվի առնել նաև ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի N516-Ն որոշման 7-րդ և 12-րդ կետերը և այն հանգամանքը, որ մեր ձեռնարկությունը տեղական արտադրող է և համարվում ենք հիմնական մատակարարը տնտեսական ապրանքների, խնդրում ենք բողոքի մերժման պարագայում, ընկերությանը չգցել սև ցուցակ:

Ներկայացվում է պահանջվող անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը:

1. *Բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն- Սերոբ Հայրապետյսսն, Ք. Երևան, Դավթաշեն, 9փ, 3տ, անձը հաստատող փաստաթղթի պատճենը կցվում է:*

2. *Պատվիրատուի անվանումը և հասցեն- ՀՀ պաշտպանության նախարարություն, ք. Երևան, Բագրևանդի 5 :*

3. *Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35», ալյումինե կաթսաներ (կոտելոկ):*

4. *Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը- Վեճի առարկան՝ հայտի մերժումն է, Բողոքը ներկայացրած անձի պահանջն է՝ հայտի վերականգնումը:*

5. *ա) Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները- Հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, որի մասին ծանուցվել ենք էլ. փոստի միջոցով՝ 14.06.2019թ, համաձայն որի մեր հայտը մերժվել է որակավորման չափանիշները չուղարկելու պատճառով: Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ №26-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 1 և 4-րդ ենթակետերով նախատեսված պահանջները, գնահատող հանձնաժողովի կողմից խաղտվել է «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի իրավունքները, հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում չենք իրազեկվել թե հաղթող մասնակից ճանաչվելու և թե որակավորման փաստաթղթերը ուղարկելու վերաբերյալ:*

բ) Բողոքի փաստացի հիմք է հանդիսանում մեր էլ. փոստին որակավորման փաստաթղթերը չստանալը:

6. *Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը- Կցվում է:*

7. *Այլ անհրաժեշտ տեղեկություններ- Փորձագտները ուսումնասիրել են էլ. փոստը և մեր կողմից խախտումներ և բացթողումներ չեն հայտնաբերել, նաև չեն հայտնաբերել այն պատճառը, որի հետևանքով տեղեկություն չենք ստացել:»:*

Ելնելով վերոնգրյալներից, «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձից խնդրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով ընթացակարգին «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը վերականգնել:

Ի լրումն «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի, Ընկերությունը 24.06.2019թ. թիվ 14 գրությամբ հայտնել է, որ.

«Հրավերի 7.1 կետում կա հստակ պահանջ, ըստ որի՝ համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին, որը և չի կատարվել և դրանով իսկ խախտվել են Մետաղաման եղեն գործարան ԲԲԸ-ի իրավունքները:»:

Ընկերությունը 26.06.2019թ. թիվ 16 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Նախ և առաջ կրկին տեղեկացնում եմ, որ մեր ընկերությունը 1992թ-ից՝ սկզբում պետական պատվերների, այնուհետև մրցույթների միջոցով մատակարարել է հիմնականում ուժային կառույցներին, այդ թվում ՀՀ Պաշտպանության Նախարարությանը իր իսկ կողմից արտադրված տնտեսական, խոհանոցային ապրանքներ՝ սև, ցինկապատ, ալյումինե և չխանգոտվող պողպատից պատրաստված: Բազմիցս հրավիրվել եմ Պաշտպանության Նախարարություն, որպես տեղական արտադրող, որպեսզի ներկայացնեմ նոր տեսականի, որը անհրաժեշտ է բանակին: Եղել են դեպքեր երբ հնարավոր չի եղել մեր պայմաններում

այն պատրաստել, սակայն շատ դեպքերում այն պատրաստել ենք, ներկայացրել նմուշը և մասնակցել մրցույթներին: Մեզ հետ մրացակցել են նաև ներկրողները: Մրցույթների ընթացքում գների համեմատումից հետո պատահել է, որ մեր ապրանքը չի հաղթել ու խաղաղ կերպով շարունակել ենք մասնակցել և մինչ օրս պատշաճ կերպով մատակարարել ապրանքը, ինչը հաստատող փաստերը շատ են: Եղել են դեպքեր, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը կողմնորոշվել է, որ արտերկրից բերած ապրանքի թե որակը և թե արժեքը իրեն և պատվիրատուին չի բավարարում, և որոշել է պատվիրել և գնել ապրանքը մեր ձեռնարկությունից: Քանի որ մեր գործարանը գործում է դեռևս 1939 թվականից և ապրել է զարգացում, ունի հնարավորություն, շուկայի ակտիվության դեպքում, պատրաստելու նոր տեսականիներ: Ես այս ընկերությունում սկսել եմ աշխատել 1982 թվականից, սկզբում որպես էներգետիկ, այնուհետև գլխավոր էներգետիկ, ապա էներգոմեխանիկայի բաժնի վարիչ և 1992 թվականից որպես տնօրեն: Գործարանը սեփականաշնորհվել է 1996 թվականին: Ներկայումս ունի 108 բաժնետեր և 20-30 աշխատակից, որոնք պահանջարկի դեպքում մասնակցում են աշխատանքներին: 20 աշխատակից մշտապես գտնվում են աշխատանքի մեջ և վարձատրվում են կուտակված միջոցների հաշվին, անգամ եթե աշխատանքներ չկան: Նշեմ, որ ամբողջ Կովկասում եղել են չորս նման գործարաններ, սակայն այսօրվա դրությամբ պահպանվել է միայն Հայաստանի արտադրությունը, որպես խոհանոցային ապրանքների արտադրություն: Ընթացքում գործարանը ներդրել է շուրջ 20 տեսակի արտադրանք, և ունի 130 ապրանքատեսակի հնարավորություն շուկային մատակարարելու համար և հնարավորություն 450 աշխատատեղ բացելու համար, ներդրված ապրանքատեսականուն է պատկանում չայրվող հատակով ամանեղենը (տեֆալ), թվաներ կաթսաներ և այլն, կառուցել է ձուլման արտադրամասը, 1 Օկվ լարում օդային գիծը 1150մ երկարության, գազաֆիկացրել է արտադրությունը, սակայն վերանորոգումներ չեն կատարվում ֆինանսական միջոցների սղության պատճառով, իսկ չօգտագործված գումարները գումարվում է շահույթին, որից էլ վճարվում է շահութահարկ:

Շարունակելով սկզբում շարադրված միտքս, այն մասին թե ինչպես էր ծնվում նոր արտադրանքը՝ նշեմ, որ 2017 թվականին ՀՀ ՊՆ թիկունքի պետ՝ Ն. Յոլչյանի հրավերով ներկայացա և նա պատվիրեց պատրաստել ուսապարկի մեջ դրվող ալյումինե կաթսա բանակի կարիքների համար: Մենք պատրաստեցինք և հաջորդ տարի մասնակցեցինք մրցույթի: Նշեմ որ կաթսան արտադրվել է վեց ամսում, համապատասխան գործիքներ (կաղապարներ)՝ թվով 20 հատ, պատրաստելուց հետո: Մրցույթին մեզ հետ մասնակցած,

նույնպես մատակարար «Երվադա» ՍՊԸ-ն հաղթեց մրցույթը, սակայն ապրանքը գնեց մեր գործարանից և մատակարարեց ՀՀ Պաշտպանության Նախարարությանը: Նույն տարում նոյեմբեր ամսին կրկին եղել էր աճուրդ վերոնշյալ ապրանքի ձեռքբերման, որին մասնակցել էր «Երվադա» ՍՊԸ-ն, սակայն ինչ-ինչ պատճառներով աճուրդը չէր կայացել: 2019 թվականի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով մրցույթի մյուս մասնակիցները նույնպես հին մատակարարներ են, մրցույթը ինչպես հայտնի է հաղթել, ապա մերժվել է «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն: Մերժման պատճառը հայտնի է: Եթե այն դիտարկենք շահի տեսանկյունից, հարց է առաջանում ինչ շահ ունեինք ծանուցումը չստանալու, եթե գիտակցում էինք, որ այդ պատճառով կկորցնենք աշխատատեղեր և գումարած այդ ամենին կհայտնվենք սև ցուցակում, որի հետևանքով կանգնելու է արտադրությունը, պետական բյուջե չի վճարվելու այն գումարը որը կազմել է 20000000 դրամ բյուջեին վճարվածը, 26000000 դրամ աշխատավարձը, որից հաջորդող հարկերը տուրքերը և այլն: Որտեղ է մեր շահը, որ 90 տարի կանգուն մնացած գործարանը, որը դիմացել է բազում արհավիրքների, այսօր պիտի կանգներ նման վտանգի առջև: Նշում եմ կանգներ, որովհետև ներքին շուկան այնքան է լցվել արտերկրից ներմուծված նմանատիպ ապրանքներով, որ այլևս շնչել չի լինում: Վերոնշյալ հրավերի քարտուղարը մոռանալով այն, որ առաջին սխալը ինքն է գործել, մեզ չծանուցելով նույն օրը հայտերի բացման արձանագրությունը, ինչը կարող էր մեզ ուշիմ պահել, որից 3 օր հետո գոնե կզանգեինք հեռախոսահամարին, որը նշված է հրավերում: Սակայն մենք ինչպես միշտ սպասում էինք էլ. փոստին ուղարկվող գրությանը, որը ստացանք հունիսի 14-ին, որպես մերժում: Նույն օրերին Արմեփս ծրագրով ստացել ենք ծանուցումներ և պատասխանել, այդ օրերին 2 դեպքում ուղարկելով որակավորման փաստաթղթեր նույն նախարարության կազմակերպած մրցույթներին: Ինչպես եղավ որ այդ նամակը մենք չստացանք: Նշեմ, որ 1992 թվականից չի եղել նման դեպք, որ ծանուցում ստացած չլինենք: Մեր էլ. փոստին ծանուցումը չգալու պատճառները հնարավորություն չունենք ապացուցելու համապատասխան մասնագետներ չունենալու պատճառով, իսկ որոնց որ դիմել ենք օրինակ mail.ru-ի ադմինիստրացիային պատասխանը եղել է այն որ չեն կարող բացահայտել թեկուզ և տեխնիկական սխալները, իսկ բացառիկ հնարավորությունների տեր մասնագետներ մենք չենք կարող ներգրավել, խնդրում ենք հնարավորության սահմաններում օգնել, իսկ հետևանքները մեզ պարզ են:

Պետք է հաշվի առնել, որ այսօր մեր հանրապետության բյուջեն դժվար է հավաքագրվում, տեղական արդյունաբերությունը կաղում է, նոր ներդրողները այնքան էլ շատ չեն, ինչպես կարելի է դեռևս փորձաքննության չենթարկված պատճառի հետևանքով՝

նախ կանգնեցնել արտադրող գործարան, որը այս տարի մասնակցել է տարբեր մրցույթների և ունի պարտավորություն մատակարարելու մինչև 24 միլիոն դրամի նույնատիպ ապրանքներ և հայտի մերժման և երկրորդ հորիզոնականը զբաղեցրած «Վանգաս» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու պարագայում պատվիրատուն կկորցնի 1.300.000 դրամ:

Ելնելով վերոնշյալից, խնդրում եմ հաշվի առնել այն, որ իրոք կարող է երկու տարով փակվել մի արտադրություն, որը անգամ տարածաշրջանում նմանը չունի, և որ պետությունը 1.3 միլիոն դրամ կորցնելու առաջ է կանգնած: Խնդրում եմ նաև, որ հավասար նժարի վրա դնեք «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի և «Վանգաս» ՍՊԸ-ի անցած կամ այս տարվա մրցութային գումարային ծավալները, նոր որոշում կայացնեք, նամանավանդ, որ նրանք ինչքանով տերյակ եմ, հիմնականում ներկրող են, իսկ մենք աշխատում ենք հիմնականում տեղական հումքով և համարվում ենք տեղական արտադրող:

Հուսով եմ որոշումը կկայացնեք հաշվի առնելով այն որ նշված կաթսան (կոտելոկ) կարևոր նշանակություն ունի մեր բանակի համար և պետք եղած դեպքում հնարավոր է, որ արտերկրից չկարողանանք բերել, մանավանդ Բելառուսից, որտեղից նախկինում այն գնվել է, որը հանդիսացել է դուրս գրված պահեստային ապրանք:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 24.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից 20.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 24.06.19թ. թիվ ԲՔԱ-ԼՕ/1/10570-2019 գրության՝ ուսումնասիրելով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲ ընկերության բողոքը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ ՊՆ կարիքների համար «կաթսա /կոտելոկ/ ալյումինե» ապրանքատեսակի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում որպես 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մետաղամանեղեն գործարան» ԲԲ ընկերությունը (նվազագույն գնային առաջարկ

ներկայացրած մասնակից), որից հետո սահմանված կարգով ընկերությունը համակարգի միջոցով (armeps.am) ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Ընկերությունը օրենսդրությամբ սահմանված ժամկետում իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել, ինչի արդյունքում մրցույթի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, որոշում է կայացրել 1-ին չափաբաժնի մասով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲ ընկերության հայտը մերժել և հաղթող ճանաչել հաջորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:»:

Կից ներկայացվել են «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019 թվականի մայիսի 17-ին հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ալյումինե կաթսաների, սպայական գոտիների ձեռքբերումը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգր հրավերով նախատեսված որակավորման չափանիշենրին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

30.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանը ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. *««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն:*

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն սահմանված

ժամկետում փաստաղթեր ընդհանրապես չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ ծանուցումն 14.06.2019թ.-ի ուղարկել է Ընկերությանը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից 20.06.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում

մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հրավերի 2.5 կետի համաձայն՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում՝

1-ին չափաբաժնի համար խոհանոցային սպասքի և/կամ հանդերձանքի պարագաների մատակարարված լինելը,

2-րդ չափաբաժնի համար հագուստի և/կամ համազգեստի և/կամ դրանց պարագաների մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի)

պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 4.3 կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, որի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող: Մասնակիցը նաև պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2019 թվականի մայիսի 17-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

30.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանը ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. *««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն:*

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն սահմանված ժամկետում փաստաղթեր ընդհանրապես չի ներկայացրել, ուստի Ընկերության հայտը մերժել է:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, Հրավերի 2.5-րդ կետով և 4.3-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջները, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից նշած այն հանգամանքներին, համաձայն որոնց գնահատող հանձնաժողովի քարտուղարի ուղարկած էլեկտրոնային նամակը «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն չի ստացել, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուն չի ուղարկել, իսկ Ընկերությունը չի ստացել որակավորման փաստաթղթեր ներկայացնելու մասին ծանուցում: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը: Հակառակը, սույն գործի նյութերում առկա Պատվիրատուի կողմից ներկայացված ապացույցի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանն ուղարկվել է որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասին ծանուցում:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից 20.06.2019թ.-ին ներկայացրած բողոքն մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**